ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» Հունվար 2024թ. N ՄՈ/12-Ա

ք. Արմավիր

ՍՈՖԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-ով կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողի 2024 թվականի հունվարի 11-ի զեկուցագիրը.

որոշում եմ

1. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սոֆիկ Պետրոսյանին:
2. Սոֆիկ Պետրոսյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 11.01.2024 17:43:04 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**